Համագործակցելով Նախարարության համապատասխան ստորաբաժանումների և պետական կառավարման մարմինների հետ՝ ապահովում է պետություն-մասնավոր գործընկերությանն առնչվող ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի, դրանց նախագծերի մշակումը և կատարելագործման նպատակով ներկայացնում է համապատասխան առաջարկություններ: Ապահովում է պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակման, առաջարկությունների և եզրակացությունների տրամադրման, ծրագրերի դիտանցման աշխատանքների իրականացումը: Ապահովում է պետություն-մասնավոր հատված գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների կառավարման համակարգի ստեղծման և վարման աշխատանքները: Իրականացնում է պետական և մասնավոր ներդրումային ծրագրերի վերաբերյալ տեղեկա-տվության հավաքագրման, մշակման, ամփոփման, ծրագրերի իրականացման ընթացքի դիտանցման և արդյունքների գնահատման աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն՝տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենտ) մասնագիտությունների գծով կամ միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ,

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 13.4 ենթակետին հաջորդող 1-ին պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

* անգլերենի և ռուսերենի ազատ տիրապետում: